Փորձագիտական գնահատական «Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի գործող խմբագրության ռիսկերի վերաբերյալ

Ներածություն եւ գնահատման նպատակը.

««Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ նաեւ՝ ԶԼՄ օրենքի նախագիծ) դեռեւս քննարկման փուլում է, այն ակտիվ քննարկվում է նաեւ քաղաքացիական հասարակության հետ: Փորձագիտական գնահատականի նպատակն է հաշվի առնելով նախագծի մշակման նախապատմությունը՝ պարզել, թե քննարկվող նախագծի այս պահին գործող տարբերակն ինչ խնդիրներ կամ ռիսկեր է պարունակում եւ, ըստ այդմ, որքանով է ընդունելի մեդիա ազատության տեսանկյունից:

ԶԼՄ օրենքի նախագծով նախատեսվում է ներդնել լրատվական գործունեություն իրականացնողների ինքնակարգավորման մեխանիզմը: Այդ համատեքստում ԶԼՄ օրենքի նախագիծը ճանաչում է լրատվական գործունեություն իրականացնողների ինքնակարգավորումը, ԶԼՄ ոլորտում ստեղծում է նոր դերակատար՝ Մեդիա խորհուրդը, ինչպես նաեւ ի թիվս այլնի վերանայում է զանգվածային լրատվության միջոցի հասկացությունը:

ԶԼՄ օրենքի նախագծի թույլատրելիությունը.

Էական է, որ ԶԼՄ օրենքի նախագծի կարգավորման առարկան, այն է՝ ինքնակարգավորման մեխանիզմի իրավական ճանաչման եւ ներդրման անհրաժեշտությունը բարձրաձայնվել/բարձրաձայնվում է ոլորտային հասարակական կազմակերպությունների կողմից: Արդյունքում, թեեւ ԶԼՄ օրենքի նախագիծը պաշտոնապես մշակվում է ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի կողմից, սակայն, ԶԼՄ օրենքի նախագծին քաղաքացիական հասարակության մասնակցությունը ոչ թե ռեակտիվ է՝ նախարարության կողմից ներգրավմամբ, այլ պրոակտիվ. այսպես, ԶԼՄ օրենքի նախագիծը նաեւ քաղաքացիական հասարակության նախաձեռնությունն է, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն ի սկզբանե են մասնակցում դրա մշակմանը, ԶԼՄ օրենքի նախագծի տեքստի վրա ուղղակիորեն աշխատում է նաեւ քաղաքացիական հասարակության փորձագետը:[1] **Նշվածի համատեքստում ԶԼՄ օրենքի նախագիծն ինքնին անընդունելի չէ, ավելին, անհրաժեշտ է:**

[1] «Ֆրիդոմ Հաուս» իրավապաշտպան կազմակերպության փորձագետ Գենյա Պետրոսյանը

ԶԼՄ օրենքի նախագծի բովանդակությունը (դրույթները, եզրույթները).
Էական է նկատի ունենալ, որ ԶԼՄ օրենքի նախագծի գործող տեքստը մշակվել է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ: Բացի այդ, ԶԼՄ օրենքի նախագիծը չի հավակնում փոփոխել լրագրողական ազատության սահմանները, այդ թվում՝ լրագրողների համար չի սահմանում նոր պարտականություններ: Նախագիծը ձեռնպահ է մնում այնպիսի կարգավորումներից, որոնք կարող են առնչվել լրագրողական ազատության սահմաններին կամ մեկնաբանվել որպես այդպիսին: **Ըստ այդմ, ԶԼՄ օրենքի նախագծում չկան այնպիսի կարգավորումներ, ներառյալ՝ եզրույթներ, որոնք առերեւույթ (առաջին հայացքից, նախնական տպավորությամբ) անթույլատրելի են լրագրողական ազատության տեսանկյունից կամ միջամտող են լրագրողների իրավունքներին:**

** Կարելի է որոշակիորեն քննարկել զանգվածային լրատվության միջոցի հասկացության՝ ԶԼՄ օրենքի նախագծով առաջարկվող ձեւակերպման նպատակահարմարությունը եւ լրագրողական ազատությանը միջամտության ռիսկերը: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ գործող օրենքում զանգվածային լրատվության միջոցի հասկացությունը չափազանց հնացած է, պարունակում է լրատվության միջոցի տեխնիկական, այլ ոչ թե ըստ էության չափանիշներ: Նման պայմաններում հնարավոր չէ պնդել, որ նախագծով առաջարկվող հասկացությունը գործողի համեմատ ռիսկեր է պարունակում, իսկ առաջարկվող նոր հասկացության հնարավոր ռիսկերը որոշակի ողջամտությամբ ենթադրել հնարավոր չէ:*

ԶԼՄ օրենքի նախագծի գործնական կիրառումը.
Էական է, որ ԶԼՄ օրենքի նախագիծը մշակվում է ոչ թե որպես լրագրողական գործունեությունը կարգավորող իրավական ակտ, այլ որպես լրագրողական գործունեության ինքնակարգավորումը ճանաչող իրավական ակտ: Այս առանձնահատկության արդյունքում ԶԼՄ օրենքի նախագծի մշակման իրավական տեխնիկան դրա մշակողներին հնարավորություն չի տվել նախագծում ներառել «իմպերատիվ», «սպառիչ», «խիստ» կարգավորումներ, նախագիծը ԶԼՄ ոլորտում առաջարկվող փոփոխությունները պայմանավորում է ոչ թե պետության, այլ ոլորտի դերակատարների գործողություններով եւ կարգավորելու փոխարեն հրում է անում ինքնակարգավորմանը: Ըստ այդմ, նախագծի նպատակի հաջողումը մեծապես կախված է դրա գործնական կիրառումից: **Այս առումով ԶԼՄ օրենքի նախագիծը պարունակում է ռիսկեր, որոնք կապված են նախագծով ներդրվող մեխանիզմների փաստացի կիրառման հետ:** Ընդ որում, նշված ռիսկը ավելի է ընդգծվում այն պայմաններում, որ ԶԼՄ օրենքի նախագծի հաջողման համար ընդհանրապես եւ դրանով նախատեսվող ինքնակարգավորման մեխանիզմի պատշաճ ներդրման համար մասնավորապես «պատասխանատու» են լինելու ոչ այնքան պետական մարմինները, որքան ինքնակարգավորման դերակատարները՝ ոլորտային հասարակական կազմակերպությունները եւ մեդիա հանրությունը, այնինչ պետական

մարմինները հիմնականում պատասխանատու են լինելու նախագծի կյանքի կոչման համար բարենպաստ միջավայր ստեղծելու եւ ինքնակարգավորման մեխանիզմի ներդրմանն աջակցելու իրենց պարտականությունները կատարելու (օրինակ, գործընթացի կազմակերպում) համար:

Վերոնշյալը չի նշանակում, որ պետք է ձեռնպահ մնալ ԶԼՄ օրենքի նախագծից կամ որեւէ փոփոխություն կատարել նախագծի տեքստում, այլ նշանակում է, որ ԶԼՄ օրենքի նախագծի ընդունման դեպքում դրա ազդեցությունը մեդիա հանրության վրա ուղղակիորեն պայմանավորված է լինելու դրա գործնական կիրառմամբ, եւ այս հանգամանքը պետք է **հաշվի առնվի քաղաքացիական հասարակության կողմից ԶԼՄ օրենքի նախագծի ընդունման դեպքում դրա կիրառման հնարավոր մարտահրավերները կառավարելու համար:**

Եզրակացություն.

ԶԼՄ օրենքի նախագիծը ոչ միայն անթույլատրելի չէ, այլ նաեւ անհրաժեշտ է, ԶԼՄ օրենքի նախագծի գործող տեքստը չի պարունակում լրագրողական ազատության սահմանափակման ակնհայտ ռիսկեր, միաժամանակ, ԶԼՄ օրենքի նախագծի ընդունման դեպքում դրա պատշաճ կիրառումը նախանշվելու է դրա կարգավորումների կիրառման պրակտիկայով, ըստ այդմ՝ ԶԼՄ օրենքի նախագծի կարգավորումների կիրառման իրական ռիսկերը կամ դրանց բացակայությունն ուղղակիորեն բխելու են դրա գործնական կիրառումից: